ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-1-15/6 (ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/6) ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի կարիքների համար՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների («Հարկատու 3» համակարգի) սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 07.12.2016թ. N 1/123-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 16.12.2016թ. ժամը 14-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ավետիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Խաչատրյանը, Հ.Նաջարյանը, Դ.Հովհաննիսյանը, Ա.Պողոսյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-1-15/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Ավետիսյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-1-15/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
«Այյունեթվորքս» ՍՊԸ-ն (ք. Երևան, Տերյան 19-4)
-ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17-1-15/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին (ARMEPS) համակարգի միջոցով հայտ չեն ներկայացրել համակարգում 16.12.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտ:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ծառայության անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	Գնման գործընթացը կազմակերպված է հիմ ընդունելով «Գնումներ մասին» ՀՀ օրենքի 14-հոդվածի 7-րդ մաս
		«Այյունեթվորքս» ՍՊԸ		
1	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների («Հարկատու 3» համակարգի) սպասարկման ծառայություններ	195 592 500	234 711 000	

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Այյունեթվորքս» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. «Այյունեթվորքս» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:
3. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:
4. Ոչ ավտոմատ եղանակով ծանուցել հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Այյունեթվորքս» ՍՊԸ-ին առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ավետիսյան

Անդամներ՝ Ա.Խաչատրյան

Հ.Նաջարյան

Դ.Հովհաննիսյան

Ա.Պողոսյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան